ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

«ԼԵՆՈՒՂՈՒ ՋԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

„20„ օգոստոս 2025 թ.

Թիվ 62

Արմավիրի մարզպետին
փոխարինող
մարզպետի տեղակալ
Բարսեղ Նիկողոսյանին

Հարգարժան պարոն Նիկողոսյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ« Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առկա է ԹԳՀԳ-ի ուսուցչի (8 դասաժամ) թափուր տեղ:

«ԹԳՀԳ» առարկայի մրցույթը կկայանա համապատասխանաբար 2025թ-ի սեպտեմբերի 5-ին ժամը 15:00-ին:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարության տեքստն ամբողջությամբ:

Առդիր՝ 1 թերթ:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Կ.Տ

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ԹԳՀԳ-ի (8 դասաժամ), թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ-ի օգոստոսի 21-ից սեպտեմբերի 3-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. -ին՝ սեպտեմբերի 5-ին ժամը 15:00-ին (ԹԳՀԳ),** Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ,գյուղ Լենուղի, փ.7-րդ, շենք 38: Տեղեկությունների համար զանգահարել 093-18-60-76 հեռախոսահամարով: